



«ԹՈՂ ՏՈՒՆԻ Բ ՄԱՆԵ ՏՂՈՅԸ ՈՐ ԻՆՏԻ ԳՍՆ» : ՂՈՒԿ. ԺԸ. 16:

Հ Ա Տ Ո Ր Գ .

ԿՈՍՏԱՆԳՆՈՒՊՈԼԻՍ . ՓԵՏՐՈՒՄ 1 . 1875 .

ԹԻԻ 2

ԽՍԻՐ ՄԸ ԻՄ ՏՂՈՅՍ


Սիրելի աղայք,

Այսօր կը կարգայի Նիկողոս անուն աղու մը վրայով որ սովորութիւն ունէր իր գարոցին ընկերներէն մատիտ և գրի թուղթ փոխ առնել, Երբեմն ստակ ալ փոխ կ'առնէր, զոր օրինակ տասը փարս կամուրջին համար կամ ասոր նման բաներ: Բայց ինչ որ այսպէս փոխ կ'առնէր, մատիտ, թուղթ, գիրք, տասը փարս, երբէք չէր հատուցաներ տիրոջը: Նիկողոս կ'ուզէր մտնալ ասոնք, և ասիկա կը պատահէր այնպէս յաճախ որ ամէն մարդ սկսաւ գիտնալ թէ, ինչ որ փոխ կը տրուէր Նիկողոսին, կորսուած էր: Ուստի երբ ան իր այս բնութիւնը գիացողներէն բան մը կը խնդրէր, գրեթէ միշտ «Ոչ» պատասխանը կ'ընդունէր:

Նիկողոս պիտի բարկանար անշուշտ, եթէ մէկը զանի գող կոչէր ուրիշներուն վերաբերեալ բաներն առնելուն համար: Բայց անոր բրածը դողութեան շատ մօտ էր:

Կամաց կամաց Նիկողոս մեծնալով չափահաս եղաւ, և սկսաւ սեղանաւորութիւն ընել, և ուրիշին ստացուածքը հատուցանելու անհոգութիւնը միշտ մնաց անոր ընտելեանը մէջ:

Օր մը բնիկ վաճառական մը քսակով 700 լիրա բերաւ սեղանաւոր Նիկողոսին, և խնդրեց անկէ պահել այն քսակը մինչև երկուշաբթի: «Շատ աղէկ» ըսաւ Նիկողոս, բայց մարդը մեկնելուն պէս, Նիկողոս ըսաւ ինք իրեն, «Եթէ այս ստակով քնուի առ-



ՈՎ ՊԻՏԻ ԶԻՉԱՆԻ

Երբէք տեսած ունիք երկու կառք նեղ փողոցի մը մէջ իրարու հանդիպած, և կառապանները որ իրարու հետ կը կռուին թէ որը տեղի պիտի տայ միւսին անցնելու: Կամ տեսած էք երբէք երկու աղայ որ իրարու կը պատահին նեղ և տղմալից փողոցի մը մէջ, և կը կռուին, վասն զի և ոչ մին կ'ուզէ մէկ ոտքով տղմին մէջ կոխելով միւսին ճամբայ տալ անցնելու:

Միայն աս կերպով չէ որ մեր կենաց մէջ կը ծագի սա խնդիրը թէ «ՈՎ պիտի զնչանի» Բայց այս խնդրոյն պա-

տասխանն է, «Ամենէն ազնուականը զիջանելու է» Այսինքն ճշմարիտ և Բրիտանոնէական մեծութիւնը մեզ կը յօժարեցնէ հրաժարիլ մեր հաճոյքէն հասարակաց օգտին համար, երբ այնպէս ընել պտտաճ է:

Յիմար և յամառ մարդիկ են որ այս պատկերին մէջի այժերուն պէս կ'ընեն: Կամուրջը չափազանց նեղ է, և այժերը չեն ուզեր իրարու տեղի տալ. բայց ամէն մարդ կը տեսնէ որ, եթէ անոնք այս բանին համար կռուին այն կամուրջին վրայ, երկուքն ալ ստուգիւ շուրջ պիտի էխան:

նեմ, և երկուշաբթի օր այս մարդը գալէն առաջ ծախեմ ամէն մէկն այսօրուան գինէն աւելի, 7,000 դահեկան կը վաստկիմ. ես այս ստակը գործածելով այն մարդուն փաստ մը չըլլար»

Այսպէս խորհելով այն 700 իրայով գծնաօլիս գնեց: Բայց երկուշաբթի օրը գծնաօլիս փոխանակ բարձրանալու իջաւ, և Նիկողոս չկրցաւ իր քով գրանուած գծնաօլիսները ծախել: Խանութրը գոցելով գնաց ասդին անդին ինկաւ մէկը գտնելու համար որմէ 700 լիրա փոխ առնելով կարող ըլլար վաճառականին ստակը տեղը դնել, բայց այնչափ դուժար մը փոխ առող չգրտաւ: Այն միջոցին վաճառականը գալով և սեղանաւորը հոն չգտնելով կասկած ունեցաւ անոր վրայ իր ստակին համար, և իսկոյն ստականութեան գիմեց: Նիկողոս փնտռուելով գտնուեցաւ, և որովհետև անկարող էր իրեն քով աւանդ գրուած ստակը հատուցանելու, բանտարկուեցաւ:

Ասկէ առաջ ձեզի բաժնէ եմ թէ, պզտիկ յանցանքներէ մանաւանդ զգոյշ ըլլալ պէտք է, քանզի պզտիկ յանցանք մը մեծին կը տանի, ինչպէս որ Նիկողոս իրեն չվերաբերած մանր մանր բաներ, ինչպէս մատիտ, թուղթ, առնելով, ճամբայ բացաւ իրեն անհաւատարիմ և խարդախ մարդ մը ըլլալու: Ձեզի դժուար չի գար «Մի սպանաներ» կամ «Մի դողանար» պատուէրը բռնել, բայց դժուար կու գայ ձեզի զգուշանալ միշտ մանր մանր յանցանքներէ որ չեն վայլեր անոնց որ «Քրիստոսի նամակներ» են: Մանր մանր յանցանքներէ կրնաք զգուշանալ միայն Աստուծոյ օգնութեամբ, և այս օգնութիւնը կըրնաք ունենալ, եթէ կը խնդրէք: Սիրելի տղայք, որովհետև նոր տարւոյ մը սկիզբը կը գրեմ ձեզի, սըրտանց կը մաղթեմ որ դուք Աստուծոյ օգնութեանը փախաբիք, որ անով ըլլաք այս նոր տարւոյս մէջ «Քրիստոսի նամակներ»

Ձեր բարեկամը ԿԱՌԱՆՍ

Հ Ա Յ Կ Ա Ն Ո Յ Շ

Հայկանոյշ կ'ուզէր դուրս ելլել և խաղալ սպիտակ ձիւնով որ կը տեղար: Բայց մայրն ըսաւ անոր որ չերթայ: Մօրը հրամանը շատ ծանր եկաւ Հայկանուչին: Ձիւնն ինչ փայլուն սպիտակութեամբ փետրոյ պէս կալուղ և մեղմ կ'իջնէր ամպերէն: Հայկանոյշ ըսաւ մօրը, «Քեզ այլ ևս պիտի չսիրեմ» և սկսաւ լալ:

Հայկանուչին մայրը, Հոբիփոմէ

տիկին, նեղացաւ իր փոքրիկ աղջկան այս կերպով խօսելուն համար, և հրամայեց անոր ակնոթի մը վրայ նստիլ մինչև որ բարկութիւնն անցնէր:

Փոքրիկ աղջիկը նստաւ, ակնոթին



վրայ, միտքը դնելով որ երբէք չգաղբի իր բարկութեանէն, և իբր կէս ժամ պոռալէն ետքը հանգարտեցաւ և լռեց: Այն միջոցին Հոբիփոմէ տիկին որ նստած կար կը կարէր իր ետևէն ոտքի ձայն առաւ, և իսկոյն երկու պզտիկ բազուկներ փաթթուեցան անոր վրիզը: Ասոնք Հայ-



կանուչին բազուկներն էին որ ժպտելով համբուրեց իր մայրը և ըսաւ. «Կը ցաւիմ որ անառակ եղայ, այսուհետև միշտ բարի պիտի ըլլամ»: Մեք և երբէք բառերը շատ մեծ բառեր են երեք տարեկան տղոց համար, բայց մինակ Հայկանոյշ չէ որ կը դործածէ զանոնք, և ետքը կը տեսնէ որ գիւրազոյն է «միշտ բարի» ըլլալ առաջադրել քան թէ իրօք այնպէս ըլլալ:

ՁԱՐՄԱՆԱԼԻ ԳՈՐԾԱԿՅՈՒԹԻՒՆ ՄԸ

Ամերիկայի այրեցեալ դօստոյն տակ տեսակ մը մըջիւն կայ որ ծառերու վրայ կ'ապրի, բայց միշտ մի և նոյն տեսակ ծառերու վրայ, և իր բոլոր անունըն անոնցմէ կ'առնէ: Ծառն իր բոլոր ճիւղերուն վրայ լայն փուշեր

ունի, որոնցմէ կ'արդելուին անասունք ծառին քաղցրահամ ճիւղերն ուտելու, և գրեթէ ամէն փուշին ստորտար վերոյիշեալ սև և խայթիչ մըջիւններուն բոյնը կայ: Իւրաքանչիւր տերևի վրայ գրեթէ միշտ առատ մեղր կայ, որմէ մըջիւնները կ'ուտեն որչափ կ'ուզեն: Ծառն ունի նաև քաղցր պտուղ մը որուն հասունները նոյնպէս կերակուր են այն մըջնոց:

Կերևի թէ հոն շատ տեսակ միջատներ կան որ այս տեսակ ծառերուն վրայ կու գան անոնց տերևներն ուտելու: Ծառին փուշերն այս միջատները չեն կրնար բռնել, ուստի և անոնք ծառին տերևներն ուտելով ծառը շուտով կը չորցնէին, եթէ այն ծառին վրայ ապրող մըջիւնները չըլլային, որոնք թրթուրներ և ուրիշ փոքր միջատներ տեսնելով անմիջապէս զանոնք խայթելով կը սպաննեն: Եթէ դուք ալ այն ծառին մէկ ճիւղին դաչելով թեթեւ կերպով մը շարժէիք զայն, իսկոյն հազարաւոր մըջիւն վազելով կու գային ձեր վրայ ալ շարձակելու:

Կերևայ որ այս տեսակ ծառը չի կրնար ապրիլ առանց այն մըջիւններուն, ոչ ալ մըջիւնները կրնան ապրիլ առանց այն ծառին: Ասիկա զարմանալի գործակցութիւն մը չէ:

ՊԶՏԻԿ ԲԱՅՑ ՄԵՍ ՄՈԼՈՒԹԻՒՆ ՄԸ

Սիրելի տղայք, Կ'ուզեմ ձեզի պատմութիւն մը ընել, եթէ կը խոստանաք ինձի ուշադրութիւն ընել:

Երէկ երբ փողոցէն կ'անցնէի, տեսայ որ Օննիկ անկիւն մը նստած էր, և ձեռքին մէջ համարչի բաւական հատեր ունէր: Օննիկ այս հատերէն սմանք դադառ առնելով պահեց իր աջ ձեռքին մէջ, և Արմենակին հարցուց, «Դար է թէ կոճատ» (թէք մի չիֆթ մի): Արմենակ Օննիկին այս «Դար և կոճատ» հարցմանը պատասխանելով միշտ կը շահէր, այնպէս որ Օննիկ բուր իւր հատիկները կորսնցնելով գնաց մօրմէն ստակ խնդրել հատեր գնելու համար, յուսալով իր կորսնցուցած հատերը նորէն ստանալ խաղը շարունակելով: Օննիկ նորէն հատեր գնեց և խաղոց, բայց զանոնք ալ կորսնցուց. դարձեալ գնեց և դարձեալ կորսնցուց: Օննիկ ամէն անգամ որ իր հատերը կը կորսնցնէր խաղալով, մօրը կը

գիմեր ստակի համար որ նորէն հատեր գնէր, այնպէս որ մայրը վերջապէս ձանձրանալով յանդիմանեց զանի, և այլ ևս ստակ չտուաւ :

Գուք չէք դիտեր թէ այս տեսակ խաղերէն ինչ փասս կը հետեւի. ուստի կը յորդորեմ ձեզ որ զգուշանաք այսպիսի խաղերէ, քանզի անոնք ձեզ շատ մեծ մոլութեան կը տանին : Եթէ այսօր այս տեսակ խաղերու մէջ տաւր կամ քսան փող (ք-ք) կը կորսնցնէք, թերևս վաղը ստակի մեծամեծ գումարներ պիտի տաք : Մոլութիւնը կամաց կամաց կը մեծնայ ձեր հասակին հետ, մինչև անկարելի կ'ըլլայ ձեզի անկէ ազատիլ :

Ասոր շատ օրինակներ կան, ես կը ճաննամ շատեր որ ձեր հասակին մէջ շատ կը սիրէին այս տեսակ խաղեր, և երբ մեծնալով սկսան ստակ շահիլ, շարունակեցին այն խաղերը խաղալ, և, աւանդ, ոչ միայն իրենց բոլոր ունեցածը, իրենց հանգիստն ալ կորսնցնելով տեսակ տեսակ ներութիւններու և հոգեբու մէջ ինկան, և իրենց բոլոր կեանքը թշուառութեամբ անցուցին այն խաղի մոլութեան պատճառաւ :

Ուստի, սիրելի տղաք, եթէ դուք ալ, Օննիկին և Արմենակին պէս, այս տեսակ խաղեր խաղալու էք անկէ, ապա թէ ոչ ձեր ապագայ վիճակը մեծ վտանգի մէջ է : Փոխանակ այսպիսի բախտի խաղերու, կրնաք գրօնուել ուրիշ շատ տեսակ խաղերով որոնցմէ ապագային մէջ ձեր կենացը և ստացուածքին փասս յառաջ չի գար : Մնամ սիրով

ԱՍՏՏՈՒՐ Վ . Գ . ԵՍՂՃԵԱՆ

ԻՐ ՅԱՆՅԱՆՔԸ ՃԱՆՁՆԱԼ ՉՈՒՉԵԼ

Այս պատկերին շունը կ'երևի թէ կռուիլ կ'ուզէ կատուին հետ, բայց ոչ : Այս շունը հարուստ մարդու մը տան մէջ այն կատուին հետ մէկտեղ ապրած է այնչափ երկայն ատեն, որ անոր հետ կռուիլ չ'ուզեր : Սակայն պատմութիւնը սա է : Եունու կատուն բարեկամաբար կը խօսին իրարու հետ, և իրարու կ'ըսեն ինչ թերութիւն կամ յանցանք որ ամէն օր կը տեսնեն իրարու վրայ :

Կատուն խօսիլ սկսելով ըսաւ շա-

նը . « Գիտե՛ս, ես շատ անգամ տեսած եմ որ դուն . . . » : « Կեցի՛ր, » անոր ըսաւ շունը . « Գիտես որ ես քան զքեզ մեծ եմ . կը յիշեմ քեզ երբ դու ձագ էիր. ուստի ինձի կ'իշխայ նախ խօսիլ : »

« Եատ աղէկ, ըսէ տեսնեմ, » պատասխանեց կատուն :

« Նախ, սիրելիս » ըսաւ շունը, « դուն շատ կը սիրես կրակին առջև նստիլ, այնպէս որ ես տաքնալու համար կը ստիպուիմ մէկդի ընել զքեզ : Երկրորդ, սիրելիս, երբ մէկտեղ կը ճաշենք, ամենէն աղէկ կտորը դուն կ'առնես. ասիկա քաղաքավարութեան դէմ է : Երրորդ, . . . »

« Կեցի՛ր, » ըսաւ կատուն . « Երբ ինձի պիտի գայ խօսելու կարգը : »

« Սպասէ որ խօսքս լսնցնեմ, » պատասխանեց շունը :



տասխանեց շունը : « Գուն շատ անգամ մեր տիրուհոյն գիրկը կ'երթաս, երբ երթալ ես կ'ուզէի, և ինձի կը վայելէր իբրև երիցագունի : » Եունը խօսեցաւ նաև կատուին ուրիշ գործերուն վրայ, զորս շունը յանցանք կը համարէր :

Կատուն մեծ անհամբերութեամբ սպասեց որ շունը խօսքը լսնցնէ, և ապա հարցուց : « Այս է բոլորը : » « Այո, որչափ որ հիմա կը յիշեմ, » պատասխանեց շունը :

« Եատ աղէկ, » ըսաւ կատուն, « նախ . . . »

« Ենորհակալ եմ, » ըսաւ շունը՝ կատուն խօսքը կտրելով . « ես հիմա պիտի մեկնիմ, կը յուսամ թէ ազդարարութիւնս քեզի օգտակար պիտի ըլլայ : Բայց քու ըսելիքդ մտիկ ընելու հիմա ժամանակ չունիմ : »

Այս պատկերն այն ատեն քաշուեցաւ, երբ շունը կ'ըսէր այս խօսքերը :

ՏՂԱՅՈՅ ԽՕՍԻԼԸ

Փոքրիկ տղոցմէ ոմանք զարմանալի կերպ մը ունին իրենց միտքը հասկըցնելու : Այսպիսի փոքրիկ տղու մը հարցուեցաւ թէ աղօթքն պատասխան ըսելով ինչ կը հասկցուի : « Աստուծոյ 'այս' ըսելն է, » ըսաւ պղբաբեր տղան :

Ուրիշ տղայ մը մարդուս խղճին համար ըսաւ, « Յիսուս մեր սրտին մէջ կը փոփոսայ » :

Ուրիշ մը կ'ըսէ, « Երջանկութիւնը բոլոր խաղալիկներդ պղտիկ քրոջ տալ ուզելն է » :

Պզտիկ տղայ մը երկաթագործի մը խանութը գնաց, և ի դարձին ըսաւ . « Տեղ մը դացի ուր ձի կը շինուի. հոն տեսայ որ ձիու մը վերջին ոտքը կը գամէին » :

Ուրիշ տղայ մը ըսաւ, « Հաւատքն է Աստուծոյ կամքն ընել առանց բան մը հարցնելու » :

Փոքրիկ աղջիկ մը երբ մածուն ուտելու կը նստէր, ըսաւ, « Յարութիւն այս մածունն աճառէ (սողմ) չինեց » : Մայրն ըսաւ անոր, « Ի՛նչ կ'ըսես, տղայ » : « Հապա ի՛նչ բրաւ Յարութիւն աճառը զոր անոր տուիք » : Այս պզտիկ աղջիկը խորհած էր իր մտքին մէջ, « Աճառը ճերմակ է, մածունն ալ ճերմակ է. Յարութիւն աճառն առաւ, և կէս ժամ ետքը բերաւ մածունը, ապա ուրեքն Յարութիւն աճառէն մածուն չինեց » : Փոքրիկ տղայք չեն միայն որ այս աղջկան պէս սխալ հետեւութիւններ կը հանեն :

ՄԱՐԻԱՄԻՆ ԱԶԳԱՐԱՌՈՒԹԻՒՆԸ

« Ի՛նչ պիտի ընեմ, եթէ կոյր ըլլամ, » ըսաւ Սրբուհի տիկին շփելով իր յոգնած աչուրները :

« Քեզի ըսեմ ինչ պիտի ընես, » ըսաւ անոր Մարիամ, թողը ցատկելով այն տեղէն ուր կը խաղար :

« Ի՛նչ, » հարցուց Սրբուհի տիկին : « Գնա, Յիսուսին իմացուր, » պատասխանեց պզտիկ աղջիկը : « Ես ըլլամ, այսպէս կ'ընեմ : »

« Թերևս չի բժշկեր զիս, » ըսաւ հանին (մամը) :

« Անտան, » պատասխանեց Մարիամ, « քեզի կ'օգնէ որ, 'Քու կամքդ ըլլայ' ըսելով ամենեին հոգ չընես » :

ԱՅԳԻՆԵՐԸ ԿՈՂՈՊՏՈՂ ՓՈՔՐ ԱՂՈՒՅՄՆԵՐ

Այս « փոքրիկ աղուէսները » աղոց, իրենց պարտազանցութիւններն արդարացնելու համար, գրեթէ ամէն օր գործածած խօսքերն են: Բայց այն խօսքերը շատ աղոց կեանքը կը կողոպտեն: Չոր օրինակ, երբ փոքրիկ աղուէս մըն է: Եթէ ետեւէն իյնաս, կու գաս անոր բնական տեղը որ է բնաւ:

Ուրիշ փոքրիկ աղուէս մըն է Վճիւրը:

Երրորդ փոքրիկ աղուէս մըն պէտք է լինի:

Ասիկա շատ այգիներ կողոպտած է, և շատ պտուղներու հասնելուն արդեւք եղած է:

Չորրորդ փոքրիկ աղուէս մըն է Բոցայն: Միշտ կը փախչի քենէ, և երբէք չեն կրնար բռնել զանի ըրած ֆրասին հատուցում ընել տարու համար:

Հինգերորդ փոքրիկ աղուէս մըն է Կոյ Վճիւրը:

Ասիկա վերջը արցունք կը բերէ աշուրներէ:

Վեցերորդ փոքրիկ աղուէս մըն է Լուս Վճիւրը:

Քու բարբը կողոպտողը թէև փոքրիկ յանցանք ըլլայ, ֆրաս ունի:

Ե Ա Ն Ո Ւ Ց Ո Ւ Մ

ՏՂԱՅՈՅ ՀԱՄԱՐ ՊԱՏԿԵՐԱԶԱՌԻ ԳԻՐԲԵՐ

Ուրախութեամբ կը ծանուցանենք որ Տղայոց Աւետարաններուն քանի մը տարեկանը, երկու կամ երեք տարեկանը, մէկտեղ ստուար թուղթով կազմուած և գիրք եղած են:

Երկու տարեկանը մէկտեղ կազմուածներուն հատը 15 դահեկանի, իսկ երեք տարեկանը մէկտեղ կազմուածներուն հատը 20 դահեկանի կը ծախուի (պղինձ ստակ):

Շատ գեղեցիկ պատկերազարդ գիրք ուղղունքն այս կազմեալ Աւետարանները գրաւաճառաց քով կը գտնեն:

ՆԿԱՐՆԵՐՈՎ ԿԱՐԳԱԼ

Ահա նոր բան մը: Վարի խօսքերուն մէջ գուրս ձգուած բառերուն տեղ նկարներ դրուած են, և աղոց թողուած է, այն նկարներուն նշանակութիւնը գտնելով, խօսքին պակաս քառերը լեցնել, որպէս զի խօսքին իմաստն ամբողջանայ: Գալ ամիս պի-

տի ըսենք թէ այն խօսքերը Սուրբ գիրքին օր համարներուն մէջ կը գրուուին:

1. «Երանելի է ան մարդը որ ամբարշտներուն խորհուրդին մէջ չքաւեր Ասանկ չեն ամբարշտները, հապա»



պէս որ հովը կը ցրուէ:»

2. «Եւ անիկա (արդարը)



պէս պիտի ըլլայ, որ իր ժամանակին իր պտուղը կու տայ:»

3. «Մի նայիր գինիին կարմրութեանը անիկա ետքը



պէս կը խածնէ:»

4. «Անիկա անիրաւութիւն կրեց ու չարչարուեցաւ, բայց իր բերանը չբացաւ .



պէս անանկ իր բերանը չբացաւ:»

Տղայոց Աւետարանի համար

ՓՈՔՐԻԿ ՄԱՐԻԱՄԸ

Փոքրիկ Մարիամ շատ ուսումնասէր աղջիկ էր, ամէն օր փութով դպրոց կ'երթար, և այնպէս ուշադրութեամբ կը սորվէր իւր դասերը, որ ամենուն զարմանք կը պատճառէր: Ընկերներն անոր յաջողակութեանը և յառաջադիմութեանը համար նախանձու կը շարժէին:

Մարիամ բարեպաշտ ծնողաց զա-

ւակ ըլլալով, իր տղայութեան հասակէն բարի վարք ունէր: Համեստ էր, և հնազանդ իր ծնողացը և վարժապետին, ուստի և սիրելի էր ամենուն:

Կիրակի օր մը, երբ օդը պարզ և գեղեցիկ էր, գինեմոլ և հայհոյիչ մարդ մը արթեալ փեճակի մէջ, «Երթամ սա Բողոքականաց եկեղեցին, տեսնեմ ինչպէս բան է» ըսելով ժողովարան կու գայ, և ժողովարանին դպրոցին մէջ կ'ախուած աշխարհացոյցները տեսնելով, և կարծելով թէ անոնք Բողոքականաց ժողովարանին պատկերներն են, փոքրիկ Մարիամին որ հոն էր՝ կը հարցնէ, «Աղջիկս, ասոնք ի՞նչ են?» «Ասոնք այնպիսի բաներ են որ կիրակի օրուան չեն վերաբերիր:» կ'ըսէ Մարիամ. «չարթու մէջ եկուր, և պատմեմ քեզի թէ ինչ են ասոնք. այսօր Սուրբ գիրք կարդալու և աղօթք ընելու օր է:» Մարդը, թէ և գինով էր, փոքրիկ Մարիամին այն խօսքերը չմտաւ: Երբ տուն գնաց, այն խօսքերուն վրայ շատ մտածեց, և հետեւեալ կիրակին դարձեալ ժողովարան եկաւ առանց գինեմոլալու, և այնուհետև շարունակեց ժողովարան գալ: Այսպէս Մարիամ պատճառ եղաւ այն մարդուն արքեպիսկոպիթէնէ և ուրիշ չար ունակութիւններէ ետ կենալուն: Մարդը շատ հաւածանք և նեղութիւն կրեց Քրիստոսի համար, բայց անյողողոք մնալով, վերջապէս եկեղեցւոյ անդամ եղաւ, և Աւետարանն ընդունելէն 20 տարի ետքը, անցեալ ձմեռ ննջեց ի Տէր, միշտ հաւատարիմ իր ընդունած սուրբ կրօնքին ճշմարտութեանը:

Փոքրիկ ընթերցող, ի՞նչ կը խորհիս Մարիամին այս ըրածին վրայ. շատ բարի և գովելի բան մը չըրաս: Կը տեսնես որ Մարիամ կիրակին սուրբ պահելով, ուրիշներուն ալ այնպէս ընել յորդարելով, պատճառ եղաւ այնպիսի չար, հայհոյիչ և գինեմոլ մարդու մը Քրիստոսով փրկուելուն: Ուրեմն դուն ալ այնպէս ըրէ:

ՌՈՏՈՍԳՈՑԻ ՄԻՂՐԱՆ

ԱՒԵՏԱԲԵՐՆԵՐՈՒՆ ԳԻՆԵՐԸ

ԱՄՍԱԿԱՆ (Հայերէն, Հ. Լ. Յ. Գրով Տ-ճէլբէն և Պալաւբէն), փոսթայի ծախքով տարին 1 մէճ. 10 հատ, մէկ անձի ուղղուած, 2 1/2 մէճ.:

ՇԱՐԱԹԱԿԱՆ (Հայերէն, Հ. Լ. Յ. Գրով Տ-ճէլ) փոսթայի ծախքով տարին 1 արժ. մէճ. 5 հատ, մէկ անձի ուղղուած, 4 1/2 մէճ.:

Ամերիկայի միսիոնարաց ընկերութեան կողմէն Միքաղիք Ճ. Ք. Կրին

ԿՈՍՏԱՆԳՆՈՒՊՈԼԻՍ
ՏՂԱԳՐՈՒԹԻՆ ԱՐԱՄԵԱՆ
Չազմագծրար, Յակոբեան խանթ, իւ. 12.